ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ազգային շահերի ձևավորման մեխանիզմները որպես ազգային անվտանգության ապահովման նախադրյալ. ՀՀ դեպքը

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի
Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոն

Հոդվածում քննարկվում են ազգային շահերի ձևավորման մեխանիզմները՝ ելնելով դրանց մշակման գործընթացում սուբյեկտների հստակեցման, ինչպես նաև ազգային շահերի՝ ռազմավարական փաստաթղթերում ձևակերպման հրամայականից: Փորձ է արվում ազգային շահերի ձևավորման ու փաստաթղթավորման գործընթացը դիտարկել ազգային անվտանգության ապահովման համատեքստում արդյունավետ քաղաքականության մշակման և վարման անհրաժեշտությունից ելնելով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային հարաբերություններում ճիշտ դիրքավորման և արդյունավետ քաղաքականության վարման նախապայման է ազգային շահերի գիտակցումը և դրանից բխող ռազմավարական քաղաքականության վարումը, հոդվածում քննարկվում են նաև ազգային շահերին առնչվող խնդիրները միջազգային հարաբերությունների տեսությունների համատեքստում (ռեալիզմ, լիբերալիզմ): Համեմատական վերլուծության են ենթարկվել՝ 2007 և 2020 թթ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունները՝ նպատակ ունենալով մատնանշել ազգային շահերի ռազմավարական ամրագրման դերն ու կարևորությունը պետության արդյունավետ քաղաքականության տեսանկյունից:

Բանալի բառեր
ազգային շահ, ազգային անվտանգություն, շահերի ձևավորման մեխանիզմներ, ազգային անվտանգության ռազմավարություն, միջազգային հարաբերություններ

Նախաբան

Արդի միջազգային հարաբերություններում պետությունների կողմից ազգային շահերի իրացման ապահովումը ամենաէական

գործընթացներից է, քանզի ազգային շահերի արդյունավետ իրացումով է պայմանավորված ազգային անվտանգության ապահովումը: Ուստի ազգային շահերի ձևավորման մեխանիզմների՝ որպես ազգային անվտանգության ապահովման նախադրյալների վերլուծությունն ու համապատասխան քաղաքականության մշակման գործընթացում դրանց՝ որպես ուղենիշների կիրառման խնդիրների վերլուծությունը խիստ արդիական է:

Հոդվածի նպատակն է համակողմանի հետազոտության միջոցով վերլուծել ազգային շահերի էությունը, ձևավորման մեխանիզմները և խնդիրը դիտարկել ազգային անվտանգության ապահովման համատեքստում, ինչպես նաև ռազմավարական տարբեր փաստաթղթերի շրջանակներում (դոկտրին, հայեցակարգ, ծրագիր և այլն): Այդ համատեքստում անդրադարձ է կատարվում ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություններին (2007, 2020) և դրանցում ազգային շահերի ռազմավարական ամրագրումներին:

Միաժամանակ միջազգային հարաբերությունների որոշ տեսությունների համատեքստում ազգային շահերի ձևավորման ու ամրագրման խնդիրը ևս կարևոր է, քանզի ազգային շահերը միտված են ապահովելու ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության արդյունավետ իրականացումը: Մասնավորապես, առանց ազգային շահերի ճիշտ վերլուծության ու գնահատման հնարավոր չէ ճիշտ դիրքավորվել միջազգային հարաբերություններում՝ ապահովելով պետության անվտանգությունը:

Ազգային շահեր և ազգային անվտանգություն. ռազմավարական ապահովման խնդիրները

Ազգային շահը պետության ոլորտային (քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային և այլն) գիտակցված

նպատակների ամբողջությունն է[1]: Պատահական չէ, որ ֆրանսերենում կիրառվում է «պետության պատճառաբանված գործունեություն» (Raison d'État) եզրույթը, որը հստակորեն ամրագրում է շահերի ընկալումը որպես «գիտակցություն»[2]: Ազգային շահերն ըստ նպատակադրման կարող են լինել կարճաժամկետ և երկարաժամկետ: Կարճաժամկետ շահերը նախատեսում են կոնկրետ ժամանակահատվածում հստակեցված խնդիրների ձևակերպում և լուծում[3]: Շահերը սահմանում են տվյալ պետության առջև ծառացած ռազմավարական, կենսական նշանակություն ունեցող խնդիրները: Երկարաժամկետ շահերի դեպքում սահմանվում են պետության ներքին և արտաքին քաղաքականության ընթացիկ և ռազմավարական խնդիրները: Դրանք կարող են լինել տևական գործընթացներ: Շահերի ապահովումը սովորաբար ունի փուլային բնույթ՝ ելնելով խնդրի բարդությունից և կարևորությունից[4]:

Ազգային անվտանգության՝ որպես միջգիտակարգային հետազոտության հետազոտության ուղղության, հիմնական նպատակն է պետության անվտանգության համակարգում և ենթահամակարգերում անհատ-հասարակություն-պետության անվտանգային շահերի ապահովումը: Ազգային շահերի «անվտանգային եռանկյունու» վերաբերյալ հետաքրքիր դասակարգում է առաջարկում ամերիկացի քաղաքագետ Հ. Մորգենթաուն[5]: Ազգային շահերի վերաբերյալ ռազմավարական մշակումներ իրականացնելիս անհրաժեշտ է հիմք ընդունել անհատի շահերը, քանի որ ըստ Մորգենթաուի, դրանք նույն քաղաքացու շահերն են՝ ավելի հստակ իրավունքներով և

[1]**McLean I., McMillan A.,** The Concise Oxford Dictionary of Politics (3 ed.), https://www.oxfordreference.com/view/10.1093/acref/9780199207800.001.0001/acref-9780199207800-e-865?rskey=64Ka7V&result=928, (09.07.2021).
[2] **Gellner E.,** Nations and Nationalism, Cornell University Press, 2008, pp. 1-5.
[3]**Skelenka S.,** Strategy, National Interests, And Means to An End, 2007, pp. 6-7.
[4]A National Security Strategy Primer, National Defense University Press, 2019, pp. 1-6.
[5]**Morgenthau H., Thompson K.,** Politics Among Nations: The Struggle for Power and Peace, 1985, pp. 28-33.

պարտականություններով: Հատկանշական է, որ անհատի շահերի և անվտանգության ապահովումը տարբեր անորոշություններ է պարունակում սուբյեկտի հստակեցման առումով, իսկ քաղաքացու շահերի ապահովումը նախատեսում է հստակ իրավական կարգավորումներ և ինստիտուցիոնալացված գործընթաց:

Ազգային շահերի ապահովումը առավել ինստիտուցիոնալ անվտանգային հիմքերի վրա դրվեց մասնավորապես երկրորդ աշխարհամարտից հետո: Պատահական չէ, որ ազգային անվտանգություն եզրույթը առաջին անգամ սկսեցին կիրառել Արևմուտքում, երբ 1947 թ. ԱՄՆ-ում ընդունվեց «Ազգային անվտանգության մասին ակտը»[6], որը կոչված է հետպատերազմյան ձևավորվող աշխարհակարգի գծման ժամանակաշրջանում համակարգային ռազմավարական մոտեցումներով նպաստել ԱՄՆ-ի ազգային շահերի ապահովմանը: Ազգային շահերի ռազմավարական ապահովումը ազգային անվտանգության շրջանակներում նախատեսում է ինստիտուցիոնալ մոտեցումներ, որոնք արտահայտվում են ինչպես անվտանգային ռազմավարական փաստաթղթերի մշակմամբ, այնպես էլ համապատասխան անվտանգային կառուցների պատշաճ գործունեությամբ: Ազգային անվտանգության ինստիտուցիոնալացումը ենթադրում է ճիշտ մշակվածություն, ենթահամակարգերի ներդաշնակեցում, որոնք հստակ ամրագրված են ազգային անվտանգության ռազմավարության մեջ: Ազգային շահերի արտացոլումն անվտանգային ռազմավարական փաստաթղթերում կենսական նշանակություն ունի գրեթե բոլոր պետությունների անվտանգային քաղաքականությունների մշակման ու իրականացման համար և սովորաբար նախատեսում է երեք քայլեր: Առաջինը ազգային շահերի և ազգային անվտանգության ձևավորումն է ինստիտուցիոնալ հիմքի վրա, որն ավելի նպատակահարմար է դիտարկել «համակարգերի

[6]The National Security Act – July 26, 1947, https://global.oup.com/us/companion.websites/9780195385168/resources/chapter10/nsa/nsa.pdf, (29.09.2021).

տեսության»[7] համատեքստում: Հաջորդը սոցիալ-քաղաքական գործընթացներում հակամարտությունների կարգավորման և արդյունավետ համագործակցության խնդիրներն են: Այս համատեքստում հատկապես կարևորվում են պետությունների միջև հարաբերությունների գնահատումը շահերի համադրության, հակամարտությունների և երկակի չափանիշների կիրառման տեսանկյունից: Վերջին գործոնը պայմանավորված է պետության կառավարման խնդիրներով, քանի որ ազգային շահերի ձևավորումը, պլանավորումը և իրականացումը նախատեսում է պետության լավ կառավարում, որը պայմանավորված է ինչպես կայացած կառավարման համակարգերի, այնպես էլ համապատասխան կառավարիչների առկայությամբ:

Ազգային անվտանգության ապահովման նպատակով ռազմավարությունների մշակման տեսանկյունից կարևորվում են ազգային շահերի հստակեցման, վերլուծության և գնահատման խնդիրները, որոնք ընդհանուր առմամբ ուղղված են անհատի, հասարակության և պետության անվտանգային շահերի ապահովմանը: Ազգային անվտանգության ռազմավարությունում շահերի հստակեցումը թույլ է տալիս սահմանել պետության քաղաքական նպատակները և դրանց հասնելու ջանքերը: Մասնավորապես, եթե կառավարական և ոչ կառավարական մակարդակներում պետական պաշտոնյաները խոսում են պաշտպանական կամ արտաքին քաղաքական շահերի մասին, ապա առնվազն կենսական նշանակություն է ձեռք բերում ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ տվյալ ոլորտներին առնչվող շահերի ամրագրումը: Սա ոչ միայն հնարավորություն է տալիս հստակեցնել այդ գործընթացը, այլև հետագա քաղաքական գործընթացներում խուսափել վտանգավոր հակապետական տարաշարժերից: Ավելին, ռազմա-վարական մակարդակում շահերի հստակցումը և դրա հիման վրա ազգային անվտանգության ռազմավարության մշակումը իրականում

[7]**Parsons T.,** The Social System, 2005, pp. 45-76.

կանխարգելում է տարբեր անհատների կամ խմբերի կողմից հետագայում իրենց նեղ շահերը նույնականացնել ազգային շահերի հետ[8]: Անվտանգությանն ուղղված մարտահրավերներին դիմագրավելիս ազգային շահերը պետք է լինեն քաղաքական նպատակների իրականացման առաջնային շարժիչ ուժը: Եվ, առհասարակ, ռազմավարական ձևակերպումներ իրականացնելիս ազգային շահերը պետք է ընդհանուր, սակայն, միևնույն ժամանակ հստակ ամրագրում և ընկալում ունենան, որպեսզի տարա-կարծությունների տեղիք չտան և նպաստեն տվյալ ռազմա-վարության վերջնանպատակի իրականացմանը: Այս առումով, օրինակ, 2007[9] և 2020[10] թթ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունների (ԱԱՌ) մեջ ազգային շահերի ձևակերպման համատեքստում էական բացթողումներ կան: Օրինակ, 2007թ. ՀՀ ԱԱՌ-ի շրջանակներում կարծես անորոշ էին և գրեթե չէին հստակեցվում ազգային շահերը, իսկ 2020թ. ԱԱՌ-ի մեջ այն ոչ պատշաճ ձևակերպումներ ունի, մասնավորապես՝ դրանց առանձնացումը ունի զուտ ձևական բնույթ: Ուստի, շահերը պետք է ծառայեն որպես ուղենիշ և հիմք տվյալ պետության անվտանգությանն ուղղված սպառնալիքների գնահատման համար և միաժամանակ նպաստեն, որ տարբեր քաղաքական և փորձագիտական շրջանակների կողմից ներկայացվող մոտեցումները առնվազն չհակասեն և ծառայեն տվյալ պետության զարգացմանը: Մասնավորապես, 2020թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ «ՀՀ ազգային շահերը»

[8] **Johansen R.,** The National Interest and the Human Interest: An Analysis of U.S. Foreign Policy, Princeton University Press, 1980, pp. 3-13.

[9] Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին, փետրվար 25 2007, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189, (05.07.2021).

[10] Հայաստանի հանրապետության ազգային անվտանգության ռազմավա-րություն, հուլիս 2020 թ.
https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf, (23.11.2021):

ենթաբաժինը նվիրված է ՀՀ հիմնարար ազգային շահերին, ինչը տարբեր մասնագիտական շրջանակների կողմից վիճարկումների և տրամաբանական հակասությունների տեղիք է տալիս: Խնդիրն այն է, որ պետության անվտանգային ռազմավարական փաստաթղթերի վերաբերյալ մշակումներ իրականացնելիս ավելի նպատակարմար կլիներ, որ ազգային շահերը առանձին բաժնով ձևակերպված չլիներ, այլ ըստ պետության կենսագործունեության ոլորտների ներկայացված լիներ ամբողջ ռազմավարության տրամաբանությամբ, ինչպես ընդունված է մի շարք արևմտյան պետությունների (ԱՄՆ, ՄԲ և այլն) փորձում: Ազգային անվտանգության ապահովման գործում մյուս կարևոր խնդիրը ազգային շահերի աստիճանակարգումն է: Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ազգային շահերի դասակարգման տարբեր ձևեր: Մասնավորապես՝ լայն տարածում ունեն կենսական, կարևոր և նվազ կարևոր շահերը: Այս մոտեցումը նաև առկա է Հ. Մորգենթաուի աշխատանքներում[11]: ՀՀ-ի դեպքում կիրառվում է «հիմնարար» եզրույթը, որը երկու խնդիր ունի: Նախ՝ «հիմնարար» եզրույթը չի նշանակում «կենսական», և հետո որպես հիմնարար շահեր են ներկայացվում այնպիսի դրույթներ, որոնք ոչ միայն չեն կարող լինել հիմնարար նշանակության ազգային շահեր, այլև էությամբ համամարդկային արժեքներ և բոլորին հայտնի ճշմարտություններ են: Մասնավորապես, որպես ՀՀ հիմնարար շահեր են նշվում մարդու իրավունքների, խաղաղության, ժողովրդավարության և այլ արժեքները, սակայն, ըստ ամենայնի, այդ մոտեցումը ընդունելի չէ, քանի որ, օրինակ, Հայաստանի՝ իբրև պետության ժողովրդավարական լինելը կամ չլինելը չեն կարող պայմանավորել ՀՀ ազգային շահերը: Դա պարզ պատճառ ունի՝ ժողովրդավարությունը միջոց է ապահովելու ՀՀ կամ որևէ այլ պետության շահերը: Ուստի, ազգային շահերի արտահայտումը չի կարող պայմանավորված լինել քաղաքական վարչակարգով, քանի որ պետությունները քաղաքական վարչակարգեր ընտրում են

[11] **Morgenthau H.,** The Primacy of the National Interest, *The American Scholar,* **18**, 2, 1949, 207-212.

՝ելնելով տվյալ պետության արժեշահային առանձնահատկություն-ներից և ազգային շահերը կարող են իրականացվել ինչպես ժողովրդավար, այնպես էլ ավտորիտար կամ ամբողջատիրական վարչակարգերի պայմաններում[12]:

Անվտանգային շահերի առումով մյուս խնդիրը վերաբերում է այնպիսի անվտանգային հասկացությունների գնահատմանը և վերլուծությանը, ինչպիսիք են՝ ռիսկը, վտանգը, սպառնալիքը և մարտահրավերը: Ըստ էության, իրավիճակը կարող է որպես սպառնալիք ընկալվել միայն այն դեպքում, եթե այն վտանգում է ազգային շահերի իրացման որևէ առում: Այս համատեքստում ռազմավարություն մշակողները պետք է մանրամասն վերլուծեն, թե արդյո՞ք ռազմավարություններում ներկայացված սպառնալիքների կամ վտանգների առանձնացումն ու հստակեցումն իրականացվել են ազգային շահերի հաշվառմամբ, թե սուբյեկտիվ ընկալման հետևանք են կամ տարածված կողմանակալ մոտեցումներ: Անվտանգության ապահովման գործընթացում շահերին և դրանց դեմ ուղղված սպառնալիքներին առաջնահերթություն տալը օգնում է ազգային անվտանգության ռազմավարությունը կենտրոնացված պահել առանցքային խնդիրների վրա: Այս առումով ռազմավարություն մշակողները պետք է առաջարկեն տարբեր մեխանիզմներ՝ սպառնալիքների լրջությունը գնահատելու համար: Հաշվի առնելով ազգային շահերի ռազմավարական մշակումների վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային փորձը և դրանց արդյունավետության վերաբերյալ մասնագիտական տարբեր գնահատումները՝ ավելի նպատակահարմար է, որ յուրաքանչյուր պետություն սեփական շահերի ապահովման նպատակով մշակի ազգային շահերի ձևավորման ուրույն ազգային մեխանիզմներ, որոնք հիմնված լինեն ինչպես միջազգային փորձի ճիշտ օգտագործման, այնպես էլ նորարական մոտեցումների ներդրման վրա:

[12] **O'Neill P.,** Essentials of Comparative Politics (Sixth Edition), 2017, pp. 176-178.

Ազգային շահերի վերաբերյալ մոտեցումները միջազգային հարաբերությունների տեսությունների համատեքստում

Միջազգային հարաբերությունների (ՄՀ) զարգացումները պայմանավորված են մի շարք նախադրյալներով, որոնցից են պետությունների միջազգային համագործակցությունը և շահերի համադրելիությունը: Միաժամանակ, միջպետական հարաբերություններում շահերի բախումը խոչընդոտում է համագործակցային մթնոլորտի ձևավորմանը և հակառակը՝ շահերի համադրելիությունը նպաստում է արդյունավետ համագործակցության կայացմանը: Առավել նպատակահարմար է ազգային շահերի վերաբերյալ մոտեցումները դիտարկել միջազգային հարաբերությունների երկու՝ լիբերալիզմի և ռեալիզմի տեսությունների շրջանակներում:

Ազգային շահերի թեման լայնորեն քննարկվել է նախ և առաջ քաղաքական ռեալիզմի շրջանակներում, որտեղ ռեալպոլիտիկի տրամաբանությամբ շարադրված են միջազգային հարաբերություններում պետությունների շահերի վրա հիմնված հարաբերությունները: Այս առումով ռեալիստները աշխարհը դիտում են այնպես, ինչպես որ կա, և կարծում են, որ ժամանակակից միջազգային հարաբերություններում պետությունները առաջնորդվում են միայն իրենց շահերով: Ավելին, ըստ ռեալիստների, ՄՀ-ում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար պետությունները առաջնորդվում են սեփական շահերով (self-interset), ինքնօգնությամբ (self-help) և գոյատևմամբ (survival)[13]: Եվ պատահական չէ, որ ազգային, պետական շահը*

[13] Brown Ch., Ainley K., Understanding International Relations, Palgrave Macmillan, 2005, pp. 141-159.

* Կարելի է ենթադրել, որ պետական և ազգային շահերն ունեն որոշակի բովանդակային առանձնահատկություններ: Նման եզրակացության հիմք են հետևյալ տրամաբանական հարցադրումները: ՌԴ-ը, որպես բազմաէթնիկ պետություն, ունի պետական շահեր, բազմաթիվ քաղաքականապես ակտիվ հանրույթների շահեր, էթնոսների, միջդավանաբանական շահեր, որոնք ամբողջանում են ընդհանուր

ռեալիստների դրույթներում կենտրոնական դիրք է գրավում: Նրանք կարծում են, որ պետությունները ՄՀ-ների ռացիոնալ դերկատարներ են՝ պետության անունից հանդես եկող մարմինները, գործելով ռացիոնալիզմի սկզբունքներով, բանակցում կամ որոշումներ են ընդունում հօգուտ պետական շահերի[14]:

Ըստ լիբերալների, միջազգային հարաբերությունները անարխիկ չեն և պետությունների կողմից շահերի (self interest) իրականացման նպատակը միայն պատերազմը չէ: Պետությունները ազգային շահերի բավարարման կարող են հասնել նաև համագործակցության և պայմանագրերի կնքման ճանապարհով[15]: Եվ եթե ռեալիստները կարծում էին, որ միջազգային հարաբերություններում պետությունները ամեն կերպ պետք է ձգտեն իրացնել սեփական շահերը, ապա, ըստ լիբերալների, ժամանակակից փոխկապակցված ՄՀ-ում միակողմանի առավելությունների ձգտելը կործանարար կլինի ոչ թե մեկ, այլ բոլոր պետությունների համար[16]: Լիբերալների՝ ռազմական ճանապարհով ազգային կամ պետական շահերի իրացման մեխանիզմների մասին պատկերացումները նույնպես տարբերվում են ռեալիստների մոտեցումներից: Ըստ լիբերալիզմի տեսության, պատերազմը հասարակության օբյեկտիվ դրսևորման ձև չէ, այլ համամարդկային նշանակության մարտահրավեր, որի դեմ պետք է ուղղորդել համատեղ ջանքերը, կնքել պայմանագրեր, վերահսկողություն սահմանել և կանխել պատերազմական գործողությունները: Ավելին, ռազմական ներուժը պետությունների արտաքին քաղաքականության իրականացման կարևոր գործիք չէ,

---

պետական շահի համալիրում: Միաժամանակ, քրդերը, չունենալով պետականություն և ապրելով Մեծ Մերձավոր Արևելքի տարբեր պետություններում, փորձում են դրանց պետական շահերի համատեքստում պաշտպանել իրենց ազգային շահերը:

[14] Mae Kolbe L., Bossink B., Contingent use of rational, intuitive and political decision-making in R&D, (10.03.2022).

[15] Burchill S., The National Interest in International Relations Theory, Palgrave Macmillan, 2005, pp. 34-39.

[16] Burchill S., Linklater A, Devetak R., Theories of International Relations, Macmillan Education UK, 2013, pp. 54-59.

այլ ինքնապաշտպանության և ազգային շահերը պաշտպանելու (մնացած ոչ ուժային մեթոդների համալիրը սպառելուց հետո) միջոց[17]:

Ազգային շահերի դիտարկումը միջազգային հարաբերությունների վերոնշյալ երկու տեսությունների համատեքստում կարելի է ներկայացնել ստորև բերված աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 1.

Ռեալիզմ	**Լիբերալիզմ**
Ինչպիսի՞ն է իրականում աշխարհը:	Ինչպիսի՞ն պետք է լինի աշխարհը:
Ազգային շահերին հասնելու համար պատերազմը օբյեկտիվ և իրատեսական միջոց է:	Ազգային շահերին հասնելու համար կողմնակից են ոչ բռնի միջոցներին՝ նպաստելով համագործակցային մեխանիզմների ակտիվացմանը:
Պետությունները բացառիկ դերակատարներ են:	Պետությունները բացառիկ դերակատարներ չեն:
ՄՀ-ների համակարգը անարխիկ է:	ՄՀ-ների համակարգը անարխիկ չէ:
Կարևորվում է բարոյականությունը եթե դա չի հակասում պետության շահերին:	Կարևորվում է միջազգային բարոյականության հարցերը:

[17] Նույն տեղում, էջ 29-34:

Պետության դերը ազգային շահերի ձևավորման և ապահովման մեխանիզմների գործում

Ազգային շահերի հետազոտման գործում հատկապես արդիական են դրանց ապահովման և իրականացման մեխանիզմերի հարցերը[18], սակայն առանցքային են ազգային շահերի ձևավորման մեխանիզմներին առնչվող խնդիրները: Սովորաբար յուրաքանչյուր պետության ազգային շահերը ձևակերպվում են հասարակության միասնական նպատակների, ազգի (ազգերի) առաքելության գիտակցման, հոգևոր և բարոյական արժեքների հիման վրա: Ազգային շահերի ձևավորման գործում ամենաէական հարցերից մեկը ձևավորման գործընթացին մասնակցող սուբյեկտների հարցն է: Ազգային շահերի ձևավորման գործընթացում հիմնական սուբյեկտը պետությունն է: Ըստ այդմ, ազգային շահերի ձևավորման գործընթացում առանցքային դեր ունի ոչ միայն իշխանությունը, այլ նաև ընդդիմությունը՝ օգտագործելով օրենսդիր մարմնում ունեցած լիազորություններն ու լծակները: Իհարկե, տվյալ պետության իշխանությունները, ունենալով բոլոր գործադիր լծակները, հիմնական մասնակցությունն ունեն պետական շահերի ձևավորման գործում, սակայն այստեղ անմասն չի մնում նաև ընդդիմությունը: Վերջինս հիմնականում իրականացնում է զսպումների և հակակշիռների գործառույթ (principle of checks and balances): Այնուամենայնիվ, թե՛ իշխանությունները՝ ի դեմս կառավարության, և թե՛ ընդդիմությունը, ազգային շահերի ձևավորման ողջ գործընթացում առաջնորդվում են ռազմավարություն մշակողներին ներկայացվող հետևյալ հարցադրումներով՝

1. Ի՞նչն է արժեքավոր և կարևոր պետության ու հանրության շահերի համար:

[18] **Chafetz G., Spirtas M., Frankel B.,** The Origins of National Interests, Psychology Press, 1999, pp. 38-41.

2. Ի՞նչն է իրատեսական պետության համար[19]:

Ազգային շահերի ձևավորման մեխանիզմները նույնական չեն, և թե՛ ձևավորման մեխանիզմները, թե՛ դրանցում ելակետային տվյալները մեթոդաբանական մոտեցումների առումով (ազգային շահերի ձևավորման փուլեր, ձևավորման ընթացակարգ և այլն) տրամագծորեն կարող են տարբերվել: Ազգային շահերի ձևավորման գործում շատ կարևոր է նաև «ազգային շահերի հայեցակարգի» ձևավորումը՝ որպես ռազմավարական փաստաթուղթ, որը պետք է ընկած լինի տվյալ պետության ազգային անվտանգության ռազմավարության հիմքում: Ազգային շահերի ձևավորման գործընթացը նախատեսում է մի շարք ելակետային տվյալների առկայություն, որոնց վերլուծության ու գնահատման արդյունքն է, որ պետությունը իրականացնում է ազգային շահերի ձևավորման գործընթացը: Ելակետային տվյալները տարբեր պետությունների դեպքում տարբեր են լինում, սակայն ընդհանրացնելով կարելի է նշել դրանցից էականները: Նախ՝ կարևոր գործոն է պատմական և քաղաքակրթական ժառանգությունը: Այն պետությունները, որոնք ունեն հարուստ պատմաքաղաքակրթական ժառանգություն, շահերի ձևավորման գործընթացում հարկադրված են հղում անել և՛ քաղաքակրթական արժեքներին, և՛ սեփական պատմությանը: Կարևոր ելակետային տվյալներից են ժողովրդագրական ներուժը և աշխարհագրական դիրքը: Ժողովրդագրական ներուժը ենթադրում է նպատակաուղղված կերպով օգտագործել հասարակության բոլոր շերտերի կարողությունները և հմտությունները ազգային շահերի ապահովման բարդ գործընթացում: Աշխարհագրական դիրքը կարելի է դիտարկել ազգային շահերի մշակման գործում որպես ելակետ՝ հնարավորության դեպքում ֆիզիկաաշխարհագրական դիրքերի ընդլայնման ու ամրապնդման հեռանկարով: Այսպիսով, պետության ազգային շահերի ձևավորման գործընթացում

---

[19] **Ղևոնդյան Ա.,** Ազգային շահերի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման առաջնային միջավայրում, Երևան, 2011, էջ 52-62:

ելակետային տվյալները կարող են լինել ինչպես հոգևոր (պատմական, քաղաքակրթական), այնպես էլ նյութական (ժողովրդագրական, աշխարհագրական)[20]:

Պետության կողմից ազգային շահերի ձևավորման մեխանիզմը բավական բարդ գործընթաց է, որը նախատեսում է հատուկ ընթացակարգ՝ փուլային մոտեցում և ինստիտուցիոնալ որոշումների կայացման գործընթաց[21]: Նախ՝ պետական իշխանությունները կառավարության միջոցով իրենց բոլոր ինստիտուտներին և ոչ կառավարական դերակատարներին լիազորում են նշված ժամանակահատվածում հետազոտել, վերլուծել և գնահատել տվյալ գերատեսչությանն առնչվող ազգային շահերի ամբողջ համալիրը, այնուհետև արդյունքները ավարտուն ձևով և փաստաթղթավորված ուղարկել լիազորող մարմնին՝ կառավարությանը:

Ազգային շահերի մշակման բարդ գործընթացում ձևավորման մեխանիզմների վերաբերյալ մոտեցումները տարբեր են[22]: Այդ նպատակով հոդվածում առաջարկվում է ազգային շահերի ձևավորման մեխանիզմների ստորև բերված գծապատկեր 1-ը, որի հիմքում ընկած է ազգային շահերի սուբյեկտների և այդ գործընթացին մասնակցող ինստիտուտների գործառութային փոխկապվածությունը: Գծապատկերի կենտրոնում գտնվում է պետությունը (իշխանություն և ընդդիմություն) որպես ազգային շահերի ձևավորման հիմնական սուբյեկտ: Իշխանությունը՝ ի դեմս կառավարության, դրսևորորելով անհրաժեշտ քաղաքական կամք ընդդիմության հետ նախաձեռնում է ազգային շահերի ձևավորման

[20] **Nuechterlein D.,** National Interests and Foreign Policy: A Conceptual Framework for Analysis and Decision-Making, *British Journal of International Studies*, **2**, 3, 1976, 246-266.

[21] **Трухачев В.,** Сущность и содержание политических механизмов формирования и реализация национальных интересов, https://cyberleninka.ru/article/n/suschnost-i-soderzhanie-politicheskih-mehanizmov-formirovaniya-i-realizatsii-natsionalnyh-interesov/viewer, (16.11.2021).

[22] **Chong-Han Wu Ch.,** Understanding the Structures and Contents of National Interests: An Analysis of Structural Equation Modeling, *The Korean Journal of International Studies*, 15 (3), 2017, 392-412.

համալիր գործընթացը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային շահերի ձևավորման գործընթացում կարևոր է բոլոր օղակների դերակատարությունը՝ գծապատկերում ներառված են նախարարությունները, հասարակական կազմակերպությունները, անհատները, բուհերը և ուղեղային կենտրոնները՝ որպես շահերի ձևավորման մեխանիզմում դերակատարություն ունեցող պետական և ոչ պետական ինստիտուտներ: Վերոնշյալ բոլոր օղակներում ստեղծվում են մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնք, օգտագործելով տվյալ գերատեսչության բոլոր ռեսուրսները, փորձում են իրենց ոլորտին առնչվող պետական շահերի հայեցակարգային գերատեսչական փաստաթղթեր մշակել (օրինակ՝ ռազմական դոկտրին, արտաքին քաղաքականության հայեցակարգ և այլն): Ցանկացած գերատեսչության հայեցակարգային փաստաթուղթը ավարտուն տեսքով պետք է արտահայտի ոչ թե տվյալ նախարարի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի անձնական կանխակալ կարծիքը, այլ ամբողջ գերատեսչական խմբի միասնական մասնագիտական եզրակացությունը:

Անշուշտ, անհատները ամբողջ մարդկության պատմության ընթացքում եղել են շարժիչ ուժեր և վճռորոշ դերակատարություն են ունեցել իրադարձությունների ձևավորման և ուղղորդման տեսանկյունից[23]: Սակայն պետք է նաև հստակ տարանջատել գերատեսչական/ինստիտուտի աշխատանքային խմբի ղեկավար-անհատին (ով ղեկավարում է հայեցակարգային փաստաթղթի մշակման աշխատանքային խումբը) առհասարակ ազդելու ներուժ ունեցող անվանի պետական-հասարակական գործչից, ով, չլինելով նման գերատեսչական խմբերի ղեկավար կամ անդամ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցում է ազգային և միջազգային քաղաքական գործընթացների վրա:

---

[23] **Фуко М.,** Интеллектуалы и власть (избранные политические статьи, выступления и интервью), Праксис, Москва, 2002, сс. 201-210.

Գծապատկեր 1.



Ազգային շահերի վերաբերյալ որոշումների կայացումը և ռազմավարական փաստաթղթերի մշակումը ենթադրում է փուլային մոտեցում: Մասնավորապես, արդյունավետ կլինեն աշխատանքները նախ առանձին խմբերում (տարբեր մասնագիտացված հաստատություններում), ապա նաև ամփոփոչ խմբում, որը պետք է ստեղծի կառավարությունը: Ինչպես առանձին խմբերում, այնպես էլ ամփոփիչ խմբում աշխատանքները պետք է իրականացվեն պահպանելով անաչառության և անկողմնակալության սկզբունքները: Ուստի, չափազանց կարևորվում է խմբերում աշխատանքների ճիշտ պլանավորումը և իրականացումը: Գծապատկեր 2-ում նախատեսված քայլերի հաջորդականությունը կարող է ապահովել գործընթացի արդյունավետությունը: Խմբային աշխատանքների ամփոփիչ փուլում նախատեսվում է բոլոր մոտեցումների համադրում, վիճելի

կարծիքների հստակեցում, առկա տվյալների և հետազոտությունների արդյունքների համադրում և փոխանցում կառավարության ստեղծած ամփոփիչ խմբին:

Գծապատկեր 2.



Ազգային շահերի վերլուծության և հստակեցման համար առաջնային է դրանց տարանջատումն ըստ կենսական, կարևոր և նվազ կարևոր շահերի[24]: Պետական և ոչ պետական ինստիտուտների կողմից ստեղծված ամփոփիչ աշխատանքային

[24] **Barder O.,** Aid in the National Interest: When is Development Cooperation Win-Win?, https://www.cgdev.org/blog/aid-national-interest-when-development-cooperation-win-win, (21.10.2021).

խմբերի գործիքակազմը և մեթոդաբանությունը կարող են տարբերակվել՝ ելնելով մշակվող փաստաթղթի առանձնահատկություններից: Միաժամանակ, ազգային շահերի վերլուծության գործընթացի այս կամ այն իրավիճակում կարող է դժվարություն առաջանալ մեկ գործիքակազմ կամ մեկ մեթոդաբանությունընտրելու հարցում: Առավելագույն արդյունք ստանալու համար երբեմն կարիք կլինի համադրել մի քանի մեթոդներ:

Այսպիսով, ազգային շահերի ձևավորման մեխանիզմներն ամբողջանում են հետևյալ տրամաբանական քայլերի հաջորդականությամբ՝

- ազգային շահերի սահմանում,
- ռազմաքաղաքական իրավիճակի գնահատում և վերլուծություն,
- ազգային շահերի հայեցակարգի մշակում,
- ազգային անվտանգության ռազմավարության մշակման գործընթացի մեկնարկ,
- ազգային շահերին ուղղված վտանգների, սպառնալիքների, ռիսկերի և մարտահարվերների հստակեցում,
- տարբեր ռազմավարական փաստաթղթերի մշակում և իրականացում,
- նախատեսված միջոցառումների բյուջեի պլանավորում:

Շահերի ձևավորման գործընթացը յուրատեսակ եռամիասնություն է, որտեղ պետությունը՝ որպես հիմնական սուբյեկտ, նախաձեռնում է ազգային շահերի ձևավորման գործընթացը, որտեղ առաջնային դերակատարություն պետք է ունենան պետական ինստիտուտներն ու ոչ պետական դերակատարները:

Գծապատկեր 3-ը ներկայացնում է պետության կողմից ազգային շահերի ձևավորման գործընթացը:

Գծապատկեր 3.



ՀՀ ազգային շահերի վերլուծություն և արդիականացում

Որքան ճիշտ և հիմնավոր է կազմակերպված ազգային շահերի վերլուծության և գնահատման գործընթացը, այնքան պետությունները կարողանում են ավելի արդյունավետ պետական կառավարում իրականացնել, ընդունել քաղաքական որոշումներ և, ըստ անհրաժեշտության, արդիականացնել ազգային շահերը։ Այս առումով ՀՀ ազգային շահերի թեման քննարկելուց առաջ ճիշտ կլինի նախ հստակեցնել Ս. Հանթինգտոնի «ո՞վ ենք մենք» հարցադրման պատասխանը՝ ազգային շահերի ելակետային տվյալները վերլուծելու և գնահատելու համար[25], ինչը

[25] **Huntington S.,** Who are We?: The Challenges to America's National Identity, Simon and Schuste, 2014, pp. 21-23.

հնարավորություն կընձեռի հստակեցնել նրա մեկ այլ՝ «ով չենք մենք» հարցադրման պատասխանը։

ՀՀ դեպքում ազգային շահերի մշակման և արդիականացման գործընթացում կան մի շարք խնդիրներ (մեթոդաբանական, բովանդակային)։ Նախ՝ մենք չունենք ազգային շահերի մշակման հստակ գործընթաց և համապատասխան մեխանիզմներ, չկան նաև դրանց հստակ ձևակերպումներն ու ամրագրումները անվտանգային ռազմավարական փաստաթղթերում։ Ավելին, չունենք այնպիսի կարևոր փաստաթուղթ ինչպիսին ազգային շահերի հայեցակարգն է, իսկ, օրինակ, 2007 թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ ազգային շահերի վերաբերյալ որևէ գրավոր ձևակերպում և հստակեցում չկա։ Սա, ըստ երևույթին, լուրջ խնդիր է համարվում պաշտոնատար անձանց շրջանում ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերվող հարցերում որոշումներ կայացնելիս։ Օրինակ՝ 2009 թ. կնքված հայ-թուրքական արձանագրությունները պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանակների կողմից տարաբնույթ մեկնաբանությունների արժանացան, և չկա հստակ գնահատական, թե արդյոք այդ արձանագրությունների կնքումը կամ վավերացումը բխում էր ՀՀ ազգային շահերից։ Շահերի վերաբերյալ գրավոր փաստաթղթերի բացակայությունը վտանգավոր է, քանի որ դա կարող է լուրջ գործոն դառնալ իշխանություն-ընդդիմություն փոխադարձ մեղադրանքներ հնչեցնելու, անարդյունավետ պետական կառավարում իրականացնելու և սեփական ձախողումների քողարկման դեպքերում։

Եզրակացություն

1. Ազգային շահերի ձևակերպումը և դրանց ապահովման միտված քաղաքականությունը ազգային անվտանգության ապահովման անքակտելի մասն է: Առանցքային են նաև ազգային շահերի ամրագրումը ռազմավարական նշանակության փաստաթղթերում (նախ՝ ազգային անվտանգության ռազմավարությունում), որը հնարավորություն կընձեռի այդ շահերը դարձնել ուղենիշային պետության արդյունավետ կառավարման գործում:
2. Ազգային շահերը դրսևորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական գործընթացներում, իսկ միջազգային հարաբերությունները ազգային շահերի իրականացման և պետության դիրքավորման հիմնական հարթակն են: Միջազգային հարաբերությունների տեսությունների (ռեալիզմի և լիբերալիզմի) շրջանակներում շահերի վերլուծությունը և գնահատումը թույլ է տալիս ավելի խորքային ընկալել շահերի վրա հիմնված միջպետական հարաբերությունները և դրանց դրսևորման ձևաչափերը:
3. Ազգային շահերի ձևավորման գործընթացը բարդ է և տևական, չկան համընդունելի ընթացակարգեր, սակայն կան ելակետային տվյալներ, որոնք, անկախ պետության առանձնահատկություններից, հիմնարար նշանակություն ունեն ազգային շահերի մեխանիզմների մշակման տեսանկյունից: Այդ նպատակով հոդվածում առաջարկվող մեխանիզմները ներկայացնում են ազգային շահերի ձևավորման հիմնական սուբյեկտին՝ պետությանը և այդ գործընթացին մասնակցող այլ դերակատարներին, իսկ աշխատանքը պետք է իրականացնել փուլային մոտեցմամբ:
4. 2007թ. ընդունված Ազգային անվտանգության ռազմավարությունում ազգային շահերը հստակ ամրագրում չունեն, իսկ 2020թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ ազգային շահերը ներկայացված են

առանձին ենթաբաժնով: Մի քանի կետերով ներկայացված են ՀՀ ազգային շահերը, որոնք որևէ աղերս չունեն ՀՀ ազգային շահերի հետ և համամարդկային նշանակության հանրահայտ ճշմարտություններ են: Պետական շահերն ազգային անվտանգության ռազմավարությունում առանձին ենթաբաժնով չեն տարանջատում ազգային անվտանգության ռազմավարության բովանդակությունից, այլ շահերն էութենապես պետք է ընկած լինեն ամբողջ ազգային անվտանգության ռազմավարության հիմքում է որպես պաշտպանական, տնտեսական, արտաքին քաղաքական և այլ ոլորտների ազգային շահեր, այլ ոչ թե անջատ ներկայացվեն որպես ձևական և ոչ հստակ դրույթներ:

Mechanisms for the Formation of National Interests as a Prerequisite for Ensuring National Security: The Case of RA

NAREK GRIGORYAN
National Defense Research University, MOD, RA
Center for Regional Strategic Analysis

The article discusses the mechanisms for the formation of national interests stemmed from the imperative of defining the entities in their development process and the imperative of formulating national interests in strategic documents. An attempt is made to consider the process of formation and documentation of national interests in the context of ensuring national security based on the need for effective policy development and management. Given the fact that the realization of national interests and the management of strategic policy resulting from it is a prerequisite for proper positioning and effective policy in international relations, the article also discusses the issues related to national interests within the theories of international relations (realism, liberalism). The RA National Security Strategies of 2007 and 2020 were subjected to a comparative analysis with the aim of highlighting the role and importance of formulating national interests in strategic documents from the point of view of effective state policy.